ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИСТОРИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТ

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF HISTORY

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ИСТОРИЯ И КУЛЬТУРА

АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ

HISTORY AND CULTURE

JOURNAL OF ARMENIAN STUDIES

№ 2

ԵՐԵՎԱՆ - ЕРЕВАН - YEREVAN
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ, YSU PRESS
2019

Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի
Պատմության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ

Նախագահ (գլխավոր խմբագիր)՝ պատմ. գիտ. դոկտ., պրոֆ. **Էդիկ Մինասյան**
Խմբագրական խորհուրդ՝
Արամ Սիմոնյան (ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Աշոտ Մելքոնյան** (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Արտակ Մովսիսյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆեսոր), **Ալբերտ Ստեփանյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Հայկ Ավետիսյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Հայրապետ Մարգարյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Լևոն Չուգասզյան** (արվեստագիտ. դոկտ., պրոֆ.), **Համլետ Պետրոսյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Արման Եղիազարյան** (պատմ. գիտ. դոկտ., դոց.), **Իգիթ Ղարիբյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Հենրիկ Աբրահամյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Հայկազ Հովհաննիսյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Աշոտ Ներսիսյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Աշոտ Հայրունի** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Վալերի Թունյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Վանիկ Վիրաբյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Ռաֆիկ Նահապետյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Հակոբ Հարությունյան** (պատմ. գիտ. դոկտ., դոց.), **Հովիկ Գրիգորյան** (պատմ. գիտ. թեկն., դոց.), **Մխիթար Գաբրիելյան** (պատմ. գիտ. թեկն., դոց.), **Էդգար Հովհաննիսյան** (պատմ. գիտ. թեկն., դոց.):

Председатель (главный редактор) - докт. ист. наук, проф. **Эдик Минасян**
Редакционная коллегия:
Арам Симонян (директор Института Арменоведческих исследований ЕГУ, членкор. АН РА, докт. ист. наук, проф.), **Ашот Мелконян** (академик АН РА, докт. ист. наук, проф.), **Артак Мовсисян** (докт. ист. наук, проф.), **Альберт Степанян** (докт. ист. наук, проф.), **Айк Аветисян** (докт. ист. наук, проф.), **Айрапет Маргарян** (докт. ист. наук, проф.), **Левон Чугасзян** (докт. искусствовед. наук, проф.), **Гамлет Петросян** (докт. ист. наук, проф.), **Арман Егиазарян** (докт. ист. наук, доц.), **Игит Гарибян** (докт. ист. наук, проф.), **Генрих Абраамян** (докт. ист. наук, проф.), **Айказ Оганесян** (докт. ист. наук, проф.), **Ашот Нерсесян** (докт. ист. наук, проф.), **Ашот Айруни** (докт. ист. наук, проф.), **Валерий Тунян** (докт. ист. наук, проф.), **Ваник Вирабян** (докт. ист. наук, проф.), **Рафик Наапетян** (докт. ист. наук, проф.), **Акоб Арутюнян** (докт. ист. наук, доц.), **Овик Григорян** (канд. ист. наук, доц.), **Мхитар Габриелян** (канд. ист. наук, доц.), **Эдгар Оганнисян** (канд. ист. наук, доц.).

Chairman (Editor-in-Chief) - Doctor of Sciences, prof. **Edik Minasyan**
Editorial Board:
Aram Simonyan (Director of YSU Institute for Armenian Studies, Corresp. member of NAS RA, Doctor of Sciences, prof.), **Ashot Melkonyan** (Academician of NAS RA, Doctor of Sciences, prof.), **Artak Movsisyan** (Doctor of Sciences, prof.), **Albert Stepanyan** (Doctor of Sciences, prof.), **Hayk Avetisyan** (Doctor of Sciences, prof.), **Hairapet Margaryan** (Doctor of Sciences, prof.), **Levon Chugaszyan** (Doctor of Arts, prof.), **Hamlet Petrosyan** (Doctor of Sciences, prof.), **Arman Yeghiazaryan** (Doctor of Sciences), **Igit Gharibyan** (Doctor of Sciences, prof.), **Henrik Abrahamyan** (Doctor of Sciences, prof.), **Haikaz Hovhannisyan** (Doctor of Sciences, prof.), **Ashot Nersisyan** (Doctor of Sciences, prof.), **Asot Hayruni** (Doctor of Sciences, prof.), **Valeri Tunyan** (Doctor of Sciences, prof.), **Vanik Virabyan** (Doctor of Sciences, prof.), **Rafik Nahapetyan** (Doctor of Sciences, prof.), **Hakob Harutunyan** (Doctor of Sciences), **Hovik Grigoryan** (PhD of History, associate professor), **Mkhitar Gabrielyan** (PhD of History, associate professor), **Edgar Hovhannisyan** (PhD of History, associate professor).

ISSN 1829-2771

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ
СОДЕРЖАНИЕ / CONTENT

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
ИСТОРИЯ / HISTORY

Հովհաննես Խորիկյան, ՍԱՏՐԱՊԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ 6
Оганнес Хорикян, К ВОПРОСУ О ЦЕНТРЕ САТРАПСКОЙ АРМЕНИИ
Hovhannes Khorikyan, ON THE ISSUE OF THE CENTRE OF SATRAPIC ARMENIA
Արտակ Մովսիսյան, Լիաննա Կարապետյան, ԾՈՓՔԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ԵՎ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆԴԳՐԿՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՋ 14
Артак Мовсисян, Лианна Карапетян, О ПРОБЛЕМАХ ХРОНОЛОГИЧЕСКИХ И ТЕРРИТОРИАЛЬНЫХ ГРАНИЦ ЦАРСТВА СОФЕНЫ
Artak Movsisyan, Lianna Karapetyan, ON THE PROBLEMS OF THE CHRONOLOGICAL AND TERRITORIAL BORDERS OF THE KINGDOM OF SOPHENE
Արգիշտի Վարդանյան, ՄԱՄԻԿՈՆՅԱՆ ՏՈՀՄԸ ՏՐԴԱՏ ՄԵԾ ԵՎ ԽՈՍՐՈՎ ԿՈՏԱԿ ԱՐՇԱԿՈՒՆԻՆԵՐԻ ՕՐՈՔ 24
Аргишти Варданян, РОД МАМИКОНЯНОВ ВО ВРЕМЯ ПРАВЛЕНИЯ АРШАКИДОВ ТРДАТА ВЕЛИКОГО И ХОСРОВА КОТАКА
Argishti Vardanyan, THE HOUSE OF MAMIKONYANS DURING THE REIGN OF TRDAT THE GREAT AND KHOSROV KOTAK
Дмитрий Димидюк, ХОЛОДНОЕ ОРУЖИЕ В АРМЯНСКИХ ХРОНИКАХ ЭПОХИ БАГРАТИДОВ (КОНЕЦ IX- СЕРЕДИНА XI ВВ.): ТЕРМИНОЛОГИЯ ВОПРОСА 33
Դմիտրի Դիմիդյուկ, ՍԱՌԸ ԶԵՆՔԵՐԸ ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ (IX Դ. ՎԵՐՋ-XI Դ.). ՀԱՐՑԻ ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ
Dmytro Dymydyuk, BLADE WEAPONS IN THE MEDIEVAL ARMENIAN CHRONICLES OF THE BAGRATID ERA (END OF 9TH - MIDDLE OF 11TH CENTURIES): THE PROBLEM OF TERMINOLOGY
Դավիթ Թինոյան, ԿԻԼԻԿԻՈ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅՈՒՆԸ ՀԵԹՈՒՄ Բ-Ի ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ 48
Давит Тиноян, АРМЯНСКИЙ КАТОЛИКОСАТ В ПЕРВОЙ ПОЛОВИНЕ ПРАВЛЕНИЯ ХЕТУМА II
Davit Tinoyan, THE ARMENIAN CATHOLICOSATE IN THE FIRST HALF OF THE RULE OF HETUM II
Դիանա Հայրապետյան, ՕՍՄԱՆՅԱՆ ՖՈՒԹՈՒՎՎԱԹԻ ԵՎ ԱԽԻԱԿԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՀԱՅ ԱՐՀԵՍՏԱՎՈՐՆԵՐԻ ԻՍԼԱՄԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ (XIII-XV ԴԴ.) 55
Диана Айрапетян, РОЛЬ ОТТОМАНСКОГО ФУТУВВАТА И АХИЙСКОГО БРАТСТВА В ИСЛАМИЗАЦИИ АРМЯНСКИХ РЕМЕСЛЕННИКОВ (XIII-XV ВЕКА)
Diana Hayrapetyan, THE ROLE OF OTTOMAN FUTUWWA AND AKHI BROTHERHOOD IN THE PROCESS OF ISLAMIZATION OF ARMENIAN CRAFTSMEN (XIII-XV CC)
Ֆելիքս Մովսիսյան, XIX Դ. ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ՆՇԱՆԱՎՈՐ ՄԱՍՈՆ ՍԵՐՈՎԲԵ ԱԶՆԱՎՈՒՐԸ 63
Феликс Мовсисян, ВЫДАЮЩИЙСЯ ЗАПАДНОАРМЯНСКИЙ МАСОН XIX ВЕКА СЕРОВБЕ АЗНАВУР
Felix Movsisyan, FAMOUS WESTERN ARMENIAN MASON OF THE 19TH CENTURY SEROVBE AZNAVOUR
Հովիկ Գրիգորյան, ՀՅԴ ՑՈՒՑԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ «ՆԺՈՒՅԳԻ ԳՈՐԾ»-Ի ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼՈՒՄ (1904 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐ - 1905 Թ. ՄԱՐՏ) 77
Овик Григорян, ДЕЯТЕЛЬНОСТЬ ОТВЕТСТВЕННОГО УКАЗЫВАЮЩЕГО КОНСТАНТИНОПОЛЬСКОГО ОРГАНА АРФ ДАШНАКЦУТЮН НА ПЕРВОМ ЭТАПЕ ПОДГОТОВКИ «ДЕЛА КОНЬЯ» (СЕНТЯБРЬ 1904 Г. - МАРТ 1905 Г.)

Hovik Grigoryan, THE ACTIVITY OF ARMENIAN REVOLUTIONARY FEDERATION'S (ARF-DASHNAKTSUTYUN) CONSTANTINOPLE'S INDICATIVE ORGANIZATION IN THE FIRST STAGE OF PREPARATION OF "THE CASE OF NZHUYK" (SEPTEMBER, 1904 - MARCH, 1905)
Վանիկ Վիրաբյան, ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ՀԱՄԱՐ ԶԵՆՔ-ԶԻՆԱՄԹԵՐՔԻ ՀԱՅԹԱՅԹՈՒՄԸ 1918-1920 ԹԹ. 95
Ваник Вирабян, ПОИСК ОРУЖИЯ ДЛЯ АРМЯНСКОЙ АРМИИ В 1918-1920 ГГ
Vanik Virabyan, THE AMMUNITION PROCURANCE OF THE ARMENIAN ARMY (1918-1920)
Հովիկ Գրիգորյան, Վահագն Հակոբյան, ՈՒՐՎԱԳԾԵՐ ԴԱՎԻԹ ԱՆԱՆՈՒՆԻ ԿՅԱՆՔԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ 108
Овик Григорян, Ваагн Акопян, ОЧЕРКИ ЖИЗНИ И ДЕЯТЕЛЬНОСТИ ДАВИДА АНАНУНА
Hovik Grigoryan, Vahagn Hakobyan, NOTES ON DAVID ANANUN'S LIFE AND ACTIVITY
Արամ Սիմոնյան, Ալեքսանդր Սաֆարյան, ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՊԱՏՄԱԲԱՆՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԹՅՈՒՐՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ 129
Арам Симонян, Александр Сафарян, ИЗ ИСТОРИИ ОЦЕНКИ ИДЕОЛОГИИ ТЮРКИЗМА В ТРУДАХ ИСТОРИКОВ АРМЕНИИ
Aram Simonyan, Safaryan Alexander, ON THE IDEOLOGY OF TÜRKÇÜLÜK IN THE WORKS OF ARMENIAN HISTORIANS
Валерий Тунян, ФЕЙК-НЬЮС ПРОПАГАНДЫ ТУРЦИИ И АЗЕРБАЙДЖАНА 137
Վալերի Թունյան, ԹՈՒՐՔԻԱՅԻ և ԱԴՐԲԵՋԱՆԻ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ԿԵՂԾ ԼՈՒՐԵՐԸ
Valery Tunyan, FAKE NEWS OF TURKEY AND AZERBAIJAN PROPAGANDA

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ
АРХЕОЛОГИЯ И ЭТНОГРАФИЯ / ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

Հայկ Ավետիսյան, Արսեն Բոբոխյան, Արտակ Գնունի, Լևոն Մկրտչյան, Նատալյա Ավետիսյան, ԹԱՂՄԱՆ ԾԵՍԻ ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ 145
Гайк Аветисян, Арсен Бобохян, Артак Гнуни, Левон Мкртчян, Наталья Аветисян, ОПЫТ СИТУАЦИОННОГО АНАЛИЗА ПОГРЕБАЛЬНОГО ОБРЯДА
Hayk Avetisyan, Arsen Bobokhyan, Artak Gnuni, Levon Mkrtchyan, Natalya Avetisyan, THE EXPERIENCE OF SITUATIONAL ANALYSIS OF THE FUNERAL RITE
Ռաֆիկ Նահապետյան, ՀԱՅԿԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ 158
Рафик Наапетян, ОБ ЭТНОГРАФИЧЕСКОМ ИССЛЕДОВАНИИ АРМЯНСКОГО НАРОДНОГО ТРАДИЦИОННОГО ЖИЛИЩА
Rafik Nahapetyan, ON THE ETHNOGRAPHIC STUDY OF THE ARMENIAN NATIONAL TRADITIONAL APARTMENT

ԱՐՎԵՍՏ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ
ИСКУССТВО И КУЛЬТУРА / ART AND CULTURE

Արթուր Հովհաննիսյան, ԽՈՐԵՆ ՏԵՐ-ՀԱՐՈՒԹՅԱՆԻ ԳՐԱՖԻԿԱՆ 166
Артур Ованнисян, ГРАФИКА ХОРЕНА ТЕР-АРУТЯНА
Arthur Hovhannisyan, KHOREN-DER HARUTYAN'S GRAPHIC

ՍՓՅՈՒՌՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
ДИАСПОРАВЕДЕНИЕ / DIASPORA STUDIES

Էդիկ Մինասյան, Լևոն Բատիև, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՈՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՀՈԳԵՎՈՐ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԵՐԸ 1991-2019 ԹԹ. 174
Эдик Минасян, Левон Батиев, ОТНОШЕНИЯ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ С АРМЯНСКОЙ ОБЩИНОЙ ДОНА В ОБЩЕСТВЕННО-ПОЛИТИЧЕСКОЙ И КУЛЬТУРНОЙ СФЕРЕ В 1991-2019 гг.

Edik Minasyan, Levon Batiev, RELATIONS OF THE 3rd REPUBLIC OF ARMENIA WITH ARMENIAN COMMUNITY OF DON IN SOCIAL-POLITICAL AND CULTURAL SPHERES IN 1991-2019
Արման Եղիազարյան, Ալիկ Ղարիբյան, Դիանա Դավթյան, ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՄՈՍԿՎԱՅԻ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ 191
Арман Егиазарян, Алик Гарибян, Дианна Давтян, ПРОБЛЕМЫ ИДЕНТИЧНОСТИ АРМЯНСКОЙ МОЛОДЕЖИ МОСКВЫ
Arman Yeghiazaryan, Alik Gharibyan, Dianna Davtyan, ISSUES OF IDENTITY OF MOSCOW ARMENIAN YOUTH
Հովհաննես Ալեքսանյան, ՀԱՅԱԶԳԻ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ-ՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԸ ՄԻՋԻՆ ԱՍԻԱՅԻ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 200
Ованнес Алексанян, АРМЯНЕ-ПАРТИЙНО-ГОСУДАРСТВЕННЫЕ ДЕЯТЕЛИ В СОВЕТСКИХ РЕСПУБЛИКАХ СРЕДНЕЙ АЗИИ
Hovhannes Aleksanyan, ARMENIANS-PARTY-STATE LEADERS IN THE SOVIET REPUBLICS OF CENTRAL ASIA

ԲՆԱԳՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ИЗДАНИЕ РУКОПИСЕЙ / PUBLICATION OF MANUSCRIPTS

Հայկազ Հովհաննիսյան, ԱԶԳԱՅԻՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԶԱՐՅԱՆՑԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ 206
Айказ Оганесян, ВИДЕНИЕ НАЦИОНАЛЬНОГО ОБРАЗОВАНИЯ СТЕПАНОСА НАЗАРЯНЦА
Haikaz Hovhannisyan. VISION OF STEPANOS NAZARYANTS ABOUT NATIONAL EDUCATION

ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ
УЧЕБНО-МЕТОДИЧЕСКИЙ / EDUCATIONAL-METHODOLOGICAL

Լևոն Հովսեփյան, ԹՈՒՐՔԻԱՅԻ ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ ԵՎ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՆԻՇՆԵՐԸ 214
Левон Овсепян, ОСОБЕННОСТИ И МЕТОДОЛОГИЧЕСКИЕ ПОДХОДЫ К ОБУЧЕНИЮ ПОЛИТИКИ В СФЕРЕ БЕЗОПАСНОСТИ И ОБОРОНЫ ТУРЦИИ
Levon Hovsepyan, THE SPECIFICS AND METHODOLOGY OF TEACHING TURKEY'S SECURITY AND DEFENSE POLICY

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ
РЕЦЕНЗИЯ / REVIEW

Փայլակ Ենգոյան, էդիկ Մինասյան, «Երևանի պետական համալսարանն ուհամալսարանականները Հայրենական մեծ պատերազմի տարիներին (1941-1945 թթ.»), Եր., ԵՊՀ հրատ., 2019, 586 էջ + 48 ներդիր: 222

ՄԵՐ ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐԸ 224

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ 226
INFORMATION ABOUT THE AUTHORS 228

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ 230
NOTICE FOR THE AUTHORS

Հայկ Ավետիսյան, Արսեն Բոբոխյան, Արտակ Գնունի,
Լևոն Մկրտչյան, Նատալյա Ավետիսյան

ԹԱՂՄԱՆ ԾԵՍԻ ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ[1]

Բանալի բառեր. մահ, թաղման ծիսակարգ, անդրաշխարհ, զատման և միավորման ծեսեր, դամբարան, դամբարանադաշտ, ճանապարհ, դրոմոս, կրոմլեխ:

Մուտք

Մահը, որպես կյանքի վերջնարդյունք, միշտ էլ իր ուրույն տեղն է ունեցել մարդկային արժեհամակարգում: Մի կողմից մահվան հանդեպ սարսափը բնորոշ է մարդուն ընդհանրապես, մյուս կողմից՝ հազարամյակների ընթացքում մարդկային քաղաքակրթությունը մշակել է մահվան և անդրաշխարհի մասին պատկերացումների քիչ թե շատ կայուն համակարգ, որը թույլ է տալիս հնարավորինս լիարժեք դարձնել երկրային կյանքը՝ անխուսափելի վախճանի պայմաններում[2]: Այս համակարգը խարսխված է այն պատկերացման վրա, թե մահը նշանակում է ոչ թե ավարտ, այլ մի վիճակից մյուսը փոխակերպում[3]:

Պատկերացումների, պատկերների և խորհրդանշերի այս համակարգը, ուղղված լինելով մահվան նկատմամբ բնազդային վախի հաղթահարմանը, անխուսափելիորեն հանգում է անմահության գաղափարին, որպես մահը հաղթահարելու միակ միջոց[4]: Անմահության գաղափարն իր մեջ ներառում է հոգու անմահությունը (հմմտ.՝ հոգու մահը)[5], ֆիզիկական մարմնի կամ նրա մնացորդների պահպանումը, և անմահություն պարգևելը, այսինքն հիշողության պահպանումը[6]:

Նշված հիմնահարցերի լուծմանն են ուղղված թաղման գործընթացի ընթացքում իրականացվող արարողությունները և ծեսերը, որոնցով հասարակությունը, փաստորեն, վավերացնում է իր անդամներից մեկի անցումն այն աշխարհ[7] և, որոնք, հանդիսանալով «անցման ծեսերից» մեկը, հետապնդում են մի շարք էական նպատակներ. ապահովել հոգու անխափան հասնելը հանդերձյալ աշխարհ, մարմնի ադապտացիան անդրաշխարհի պայմաններին և ննջեցյալների հետ հետադարձ կապի ապահովումը: Այս արարողությունների ճշգրիտ կատարումից կախված է ոչ միայն հանգուցյալի հետմահու ճակատագիրը, այլև ողջերի կյանքը այս աշխարհում[8]:

Մյուս կողմից անդրաշխարհն ինքնին խորթ երևույթ էր երկրային[9] և նույնիսկ աստվածների աշխարհներին[10], կենդանի մարդը չէր կարող մտնել այնտեղ[11], ուստի այդ աշխարհի հետ հաղորդակցվելը հնարավոր էր միայն հատուկ եղանակով և որոշակի կապուղիներով[12]:

---

[*] *Հոդվածը ներկայացվել է 26.11.2019 թ., գրախոսվել է 03.12.2019 թ., ընդունվել է տպագրության 20.12.2019 թ.:*

[1] Աշխատանքը իրականացվել է ՀՀ ԿԳՄՍ գիտության կոմիտեի կողմից հաստատված ««Հիշողության լանդշաֆտը» որպես հնագիտական ուսումնասիրության առարկա (ըստ Հայկական լեռնաշխարհի հյուսիսարևելյան շրջանների նյութերի, Ք.ա. III-I հազ.)» 18T-6A273 թեմայի շրջանակներում:

[2] Տե՛ս Гуревич П,, Спирова Э., Грани человеческого бытия, Москва, 2016, с. 130-131.

[3] Տե՛ս Харатян З., Культовые мотивы семейных обычаев и обрядов у армян, «Հայ ազգագրություն և բանահյուսություն», պր. 17, Ե., 1989, էջ 37:

[4] Տե՛ս “Эпос о Гильгамеше о все видавшем”, пер. И. М. Дьяконова, Москва, 2005, X, III, 20-31, XI, 182-196.

[5] Տե՛ս Блаженный Августин, О Граде Божием, Москва, 2000, XIII, 2.

[6] Տե՛ս Гуревич П,, Спирова Э., նշվ. աշխ, էջ 132:

[7] Տե՛ս Алекшин В., Социальная структура и погребальный обряд древнеземледельческих обществ, Ленинград, 1986, с. 6.

[8] Հմմտ Օգոստինոս Երանելու այն միտքը, որ թաղման արարողություններն ավելի շատ ողջերի սփոփանքի համար են նախատեսված Տես՝ Блаженный Августин, նշվ. աշխ., I, 12:

[9] Տե՛ս “Эпос о Гильгамеше”, XII, Հոմերոս, Ոդիսական, թարգմ Ս. Գրքաշարյան, Ե., 1957, XI, 1-50:

[10] Տե՛ս Элиаде М., История веры и религиозных идей, т. 1, Москва, 2002, с. 64

[11] Տե՛ս «Եզնըկայ Կողբացւոյ Եղծ Աղանդոց», Թիֆլիս 1914, Դ, ԺԱ:

[12] Зенкин С., Небожественное сакральное. Теория и художественная практика, Москва, 2012, с. 33.

Այս գործընթացը ուղղաձիգ չէ, քանի որ պարունակում է որոշակի ինքնուրույնություն ունեցող բազմաթիվ հանգրվանային ենթափուլեր[1]: Այս ընթացքում, զատելով համայնքի մեկ անդամին, վերջինս հավաստում է բոլոր անդամների (և՛ ողջ, և՛ ննջեցյալ) միասնությունը, որն արտահայտվում է հիշողություններում[2]՝ ապահովելով հետադարձ կապը: Հետևաբար, նշված ծեսերի հաջորդականությունը շարժման (դինամիկ) և դադարի (ստատիկ) իրավիճակների հաջորդական ու փոխկապակցված մի ընթացք է, որը կոչված է ապահովելու մեռյալների և կենդանիների ներդաշնակ փոխհարաբերությունը:

Մոտալուտ մահը և մահվան փաստի արձանագրումը

«Անցման» գործընթացի սկիզբ կարելի է համարել մահվան նախապատրաստումը: Սկզբունքորեն այն կարելի է համարել առաջին հանգրվանը դեպի անդրաշխարհ, որը համապատասխան վերաբերմունք է պահանջում ինչպես ննջեցյալից, այնպես էլ նրան շրջապատող մարդկանցից: Այս փուլի յուրահատկությունն է, որ մինչև մահը անձը պատկանում է դեռևս ողջերի աշխարհին[3] և, հետևաբար, ինչ որ տեղ անձամբ է մասնակցում նախապատրաստական աշխատանքներին: Սովորաբար մահվան նախապատրաստումը հենց նշանավորում է դադարի առաջին փուլը, երբ մահվան նախապատրաստվողը հավաստում է իր վիճակը՝ այդ մասին հաղորդելով մերձավորներին[4]: Նույնիսկ անծանոթ մարդիկ պարտավոր են այցելել մահացողին[5]: Այս գործընթացը, ամենայն հավանականությամբ, սրբագործված էր և ցանկացած խախտումը անեծքի էր արժանի[6]: Օրինակ, Սիսիանում հոգեվարքի ժամանակ հիվանդին տեղափոխում էին առանձին անկողին[7], իսկ Օրդուբադում խնամողները մահացողին դարձնում էին դեմքով դեպի արևելք դեռևս մինչև մահը[8]:

Դադարի այս պահից սկսվում է դեպի մահը տանող շարժման գործընթացը: Մահացողը հիշում է մերձավորներին, կյանքի առավել նշանակալից պահերը՝ հրաժեշտ տալով նրանց[9]:

Որոշակի պարտականություններ էին կատարում նաև մահացողի ազգականները: Մասնավորապես, Սիսիանում մահացողին ջուր էին տալիս, որ հոգին հեշտությամբ ավանդի[10]: Բուլանիխում հարազատները պարտավոր էին կամաց լալ, հոգեդարձից խուսափելու համար: Նույն պատճառով մահացողի առջև դրվում էին իր սիրելի կերակուրները[11]: Գանձակում նույն նպատակով բացում էին պատուհանները[12]: Եվ որպեսզի մահացողը հոգին հեշտությամբ ավանդի, նրա ոտերի մոտ մորթում էին կատու կամ սև աքաղաղ[13]:

Հանգուցյալի և հարազատների նախապատրաստումը թաղման արարողությանը

Մահվան պահն ինքնին հանդիսանում է այն կուլմինացիոն կետը, որը կանխորոշում է իրադարձությունների հետագա ընթացքը:

---

[1] Տե՛ս Геннеп А, Обряды перехода, Москва, 1999. с. 136.
[2] Տե՛ս Тайлор Э., Антропология, С.-Петербург, 1908, с. 241, Гуревич, Спирова, նշվ. աշխ., էջ 132:
[3] Տե՛ս Блаженный Августин, նշվ. աշխ., XIII, 9, Хайдегер М. Бытие и время, Харьков 2003, с. 275.
[4] Տե՛ս Айрес Ф. Человек перед лицом смерти, Москва, 1992, с. 38-45, հմմտ. Ս. Ներսես Ա կաթողիկոսի մահվան նկարագրությունը: Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, թարգմ, ծանոթ. Ս. Մալխասյանցի, Ե., 1987, V, ԻԴ, Սոփերք Հայկականք, h. 6, Պատմութիւն Սրբոյն Ներսիսի Պարթեւի Հայոց Հայրապետի, Ա, Վենետիկ, 1853, էջ 87:
[5] Տե՛ս Айрес Ф., նշվ, աշխ., էջ 49-51: Որոշ դեպքերում (սովորաբար սրբակենցաղ անձանց պարագայում) մոտալուտ մահը, նույնիսկ բռնի, կռահվում էր նույնիսկ արտաքնապես: Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց. աշխ. Գ. Տեր-Մկրտչեանի, Ս. Մալխասեանցի, Թիֆլիս, 1911, Գ, ՀԳ:
[6] Հմմտ. Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, թարգմ. Ս. Մալխասյանց, Ե., 1968, II, ԿԱ
[7] Տե՛ս Լալայեան Ե., Սիսիան, նիւթեր ապագայ ուսումնասիրութեան համար, «Ազգագրական Հանդէս», (այսուհետ՝ «ԱՀ»), Գ, Թիֆլիս, 1898, էջ 243:
[8] Տե՛ս Լալայեան Ե., Օրդուբադի կամ Վերին Ագուլիսի ոստիկանական շրջան և կամ Գողթն, «ԱՀ», XII, Թիֆլիս 1904, էջ 144:
[9] Տե՛ս Айрес Ф., նշվ. աշխ., էջ 45-49, հմմտ. մահացող Արտաշես արքայի «Ո՞ տայր ինձ զծուխ ծխանի եւ զառաւօտն նաւասարդի» խոսքերը (Գրիգոր Մագիստրոսի Թղթերը, յառաջաբանով և ծանոթութիւններով Կ. Կոստանեանցի, Աղեքսանդրապոլ, 1910, ԼԳ):
[10] Տե՛ս Լալայեան Ե., Սիսիան... էջ 243:
[11] Տե՛ս Բենզէ, Բուլանիխ կամ Հարք գաւառ, «ԱՀ», Ե, Թիֆլիս, 1899, էջ 172:
[12] Տե՛ս Լալայեան Ե., Գանձակի գաւառ, «ԱՀ», Զ, Թիֆլիս 1900, էջ 321:
[13] Տե՛ս Харатян З., նշվ. աշխ., էջ 31:

Նախ անհրաժեշտ է հաստատագրել մահվան փաստը: Սա դադարի երկրորդ փուլն է[1]: Այս փուլում կատարվող գործողությունները նպատակ ունեն հանգուցյալին նախապատրաստել վերջին ճանապարհին: Մահը այս պարագայում ընկալվում է ոչ թե որպես ավարտ, այլ կեցության մի հատուկ եղանակ[2]: Միևնույն ժամանակ, ողջերի մոտ առկա է այն մտավախությունը, թե արդյոք հանգուցյալը համակերպվե՞լ է իր նոր կարգավիճակին[3]: Այս նպատակով մարմնին տրվում էր որոշակի դիրք, փակվում էին աչքերը, թաշկինակով կապվում էր կզակը, թելով կապվում էին ոտքերի մատերը[4]:

Այս պահի հավաստման հետ մեկտեղ սկսվում էին թաղման նախապատրաստման բարդ արարողությունները՝ շարժման փուլը՝ հետապնդելով մի կողմից նոր հանգուցյալին ողջերից զատելու, իսկ մյուս կողմից՝ ննջեցյալների աշխարհ նոր անդամի մուտք գործելու նախապատրաստելու նպատակներ[5]:

Մահը փաստորեն բացում է կապուղին դեպի անդրաշխարհ, որը շարունակում է բաց մնալ մինչև թաղման պահը[6]: Հանգուցյալը մահվան պահին լսում էր հարազատների ձայները, որոնք իրեն կանչում են[7]: Վարքագրական գրականության մեջ հաճախ նկարագրվում են մահվան պահին մարգարեանալու դեպքերը[8]: Դեպի անդրաշխարհ բաց ճանապարհի մասին է վկայում թաղման ողբերում հիշատակվող արդեն մահացածներին հղվող բարևները: Ընդհանրապես, լաց ու կոծը կարծես կապում էին երկու աշխարհները[9]:

Մահվան պահից հանգուցյալի համար սկսվում է անդրաշխարհ տանող ճանապարհը[10]:

Այս ճանապարհի սկիզբը նշանավորում էին մի շարք հավատալիքներ: Այդ նպատակով բացում էին պատուհանները, որպեսզի հրեշտակը ներս մտնի[11], հանգուցյալի ձեռքին մոմ էին դնում, որպեսզի ճրագի օգնությամբ գտնի հարազատներին[12]: Այս գործընթացի կարևորագույն տարրերից է հանգուցյալին լողացնելը, նկատի ունենալով, որ հանգուցյալն այն աշխարհում պետք է հայտնվի այս աշխարհից մաքրված[13]: Այս նույն պատճառով արդեն թա-

---

[1] Դադարի այս պահը արտացոլվում է հայոց մեջ ընդունված մահվան բնորոշմամբ իբրև «մեծ կամ սև քուն» Հարությունյան Ս., Հայ առասպելաբանություն, Բեյրութ, 2002, էջ 386:

[2] Տե՛ս Хайдегер М., նշվ. աշխ., էջ 281:

[3] Տե՛ս Леви-Брюль Л., Сверхъестественное в первобытном мышлении, Москва, 1937, с. 135.

[4] Հմմտ. Լալայեան Ե., Վարանդա, «ԱՀ», Բ, Թիֆլիս, 1897, էջ 178, Լալայեան Ե., Սիսիան, էջ 243:

[5] Հնդկական ավանդույթի համաձայն անմիջապես մահվանից հետո կատարվում է անարյուն զոհաբերություն: Տե՛ս Пандей Р., Древнеиндийские домашние обряды, Москва, 1990, с. 197.

[6] Հմմտ. Հրեղեն խաչի երևումը Ս. Մեսրոպ Մաշտոցի թաղման ժամանակ Տե՛ս Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, III, ԿԵ:

[7] Տե՛ս Լալայեան Ե., Ձաւախք, «ԱՀ», Ա, Շուշի, 1896, էջ 309:

[8] Տե՛ս «Սոփերք», VI, էջ 86-88:

[9] Տե՛ս Степанова Э., Плачи Прасковьи Савельевой на свою смерть в контексте карельской традиции причета, «Memento mori: похоронные традиции в современной культуре». Москва 2015, с. 185, 189, Հայ իրականության մեջ այսօրինակ երգերը կոչվում են «մրմունջ»: Տե՛ս Փափազեան Վ., Պատմութիւն հայ գրականութեան, Թիֆլիս, 1911, էջ 8:

[10] Տե՛ս Айрес Ф., նշվ. աշխ., էջ 50, հմմտ. Карапетян Г. (сост.), Армянский фольклор, Москва, 1978, с. 33-34, Սոփերք, VI, էջ, 89:

[11] Տե՛ս Լալայեան Ե., Սիսիան, էջ 243:

[12] Տե՛ս Լալայեան Ե., Վարանդա, էջ 179: Այս առումով պետք է հիշատակել դամբարաններում [Կապանի Շահումյանի դամբարանադաշտի 6/10 դամբարանում (2018 թ պեղումները՝ Ա. Գնունու, Լ. Մկրտչյանի) և նույնիսկ քրիստոնեական գերեզմաններում (Չիչխանավանք)]: Տե՛ս Նալբանդյան Ա., Ալեքսանյան Տ., Միրիջանյան Դ., Չիչխանավանք, Ե., 2015, էջ 41, 58-59, հայտնաբերված ձիթաճրագները:

[13] Այս գործընթացի հետ համադրելի է անդրաշխարհ ճանապարհորդության ժամանակ զգեստները, զարդերը և իշխանության խորհրդանիշները հանելու դիցաբանական սյուժեն: Հմմտ. շումերական Ինաննայի անդրաշխարհ իջնելուց զգեստները և զարդարանքները ստիպողաբար հանելը: Տե՛ս, Крамер С., Мифология Шумера и Аккада, «Мифологии Древнего мира», Москва, 1977, с. 134-135: Արդեն քրիստոնեական ժամանակաշրջանում Բյուզանդական Թեոդորա կայսրուհու թաղման արարողակարգի ժամանակ Մինաս պատրիարքը հանում է հանգուցյալի գլխից թագը, փոխարինելով այն մետաքսե ժապավենով առանց մարգարիտների և թանկարժեք քարերի: Տե՛ս Բարթիկյան Հ., Հուստինիանոս Ա-ի ժամանակաշրջանը (527-585 թթ), Պրոկոպիոս Կեսարացին և նրա գաղտնի պատմությունը, Պրոկոպիոս Կեսարացի, Գաղտնի Պատմություն (թարգմ, առաջաբան Հ. Բարթիկյան), Ե., 1987, էջ, 8: Այլ տիպի դիցաբանական պատկերացումների համաձայն անդրաշխարհ մտնելու համար պետք են որոշ ատրիբուտներ (համապատասխան զգեստ, նժույգ և այլն): Հմմտ. Пропп В., Исторические корни волшебной сказки, Москва, 2000, с. 52-57, 85-89.

ղումից հետո հանգուցյալի շորերը նույնպես լվացվում էին: Հատկանշական է, որ շատ շրջաններում հանգուցյալին լողացնում էին կամի վրա դրված[1]:

Միաժամանակ կատարվում էին նաև զատման արարողությունները: Օրինակ են հանդիսանում ընտանիքը ապագա դժբախտություններից ապահովագրող արարողությունները (հանգուցյալին առանձնացնելը, դագաղը տնից հանելուց դուռը երեք անգամ թակելը, հանուցյալին համբուրելու արգելանքը, հանգուցյալին լողացնելուց հետո այդ նպատակի համար օգտագործած անոթները կոտրելը և այլն)[2]: Այս փուլը ևս հանդիսանում է դադարի պահ:

Մարմնի ուղեկցումը դեպի հանգստարան

Ճանապարհն ընդհանրապես հանգուցային դեր էր կատարում թաղման արարողակարգում, քանի որ այն փաստորեն կապում էր երկու աշխարհները[3]: Շարժման այս փուլը սովորաբար կարելի է նույնացնել զատման հետ: Այն սկսվում է անմիջապես հանգուցյալի տնից, կամ, որպես տարբերակ, բնակավայրի սահմանից[4]: Հնագիտորեն այդօրինակ ճանապարհներ հավաստված են Շամիրամում, որտեղ ճանապարհը տանում է բնակատեղիի արևելյան հատվածից դեպի գլխավոր դամբարանադաշտ[5]: Ամենայն հավանականությամբ ճանապարհի դեր էր կատարում Բերդիկի ամրոցից դեպի դամբարանադաշտ ձգվող քարաշարը[6]:

Որքան էլ այս գործընթացը լինի դինամիկ, այն իր մեջ պարունակում է դադարի պահեր. որոշակի հանգրվաններ[7]: Այդպիսի ժամանակավոր հանգրվան՝ դադարի փուլ կարող էր հանդիսանալ եկեղեցու բակը[8], կամ պարզապես կեսճանապարհին կատարվող արարողությունները[9]:

Դադարի հաջորդ պահը դամբարանադաշտի սահմանն է[10]: Ինքնին այս տարածքը որոշակիորեն տարբերվում է ինչպես պրոֆան, այնպես էլ սակրալ տարածքներից: Մի կողմից

---

[1] Տե՛ս Լալայեան Ե., Ձաւախք, էջ 305:

[2] Տե՛ս Բենզէ, նշվ. աշխ, էջ 173, 175, Լալայեան, Ե., Ձաւախք, էջ, 309, Լալայեան Ե., Օրդուբադի կամ Վերին Ազուլիսի ոստիկանական շրջան և կամ Գողթն, «ԱՀ», XII, Թիֆլիս, 1904, էջ 144, հմմտ. “Авеста, Закон против девов (Видевдат)”, пер. исслед. ком. Ртвеладзе Э., Саидов А., Абдуллаев Е., Санкт-Петербург, 2008, Авеста, Фрагард 6, X, 78: Լաց ու կոծի մեկ այլ մեկնաբանության համաձայն այն նպատակ ունի համոզել հանգուցյալին չվերադառնալ և չանհանգստացնել ողջերին: Տե՛ս Ловмянский Г., Религия славян и ее упадок, Санкт-Петербург, 2003, с. 117.

[3] Տե՛ս Невская Л., Семантика дороги и смежных представлений в погребальном обряде, “Структура текста”, Москва, 1980, с. 230.

[4] Հայտնի է, որ Կիևյան Վլադիմիր իշխանին մահանալուց հետո դուրս են բերել ոչ թե դարպասներից, այլ հատակում հատուկ փորված անցքից, չնայած իշխանը քրիստոնեա էր: Սա արվում էր, որպեսզի ողջերի և հանգուցյալների ճանապարհները չհատվեն: Ամենայն հավանականությամբ նույն նպատակն էր հետապնդում դիակի տեղափոխումը դեպի գերեզման սահնակի վրա, թեպետ դեպքը տեղի էր ունենում ամառը: Տե՛ս Ловмянский Г., նշվ. աշխ., էջ 116-117: Հմմտ. Авеста, Фрагард 8, II, 10:

[5] Տե՛ս Арешян Г., Исследования в Шамираме, «Археологические Открытия» (այսուհետ՝ АО) в 1977 г., Москва, 1978, с. 503-505.

[6] Տե՛ս Аветисян Г., Гнуни А., Мкртчян Л., Бобохян А., Опыт археологической типологизации некоторых памятников, связанных с функцией перехода эпохи бронзы и железа в Закавказье, “Епохи”, XXV/2, Велико Търново, 2017, с. 317. Այս գործընթացում հանգուցյալին ուղեկցում են նաև աներևույթ ուժերը, օրինակ, հայոց մեջ՝ շները կամ արալեզները: Տե՛ս Հարությունյան Ս., նշվ. աշխ., էջ 429:

[7] Այս առումով հանգրվանների առավել վառ օրինակ է հանդիսանում Խաչելիության ճանապարհը (Յովհ., ԺԹ): Ընդ որում քրիստոնեական ավանդույթը պահպանել է Կարտափիլեսի (Հովսեփի) մասին պատումը, որը Տիրոջ ընթացքը խոչընդոտելու համար դատապարտվել էր հավերժական կյանքի մինչև Երկրորդ Գալուստը: Տե՛ս Горелов Н. (сост.), Царствие небесное, Санкт-Петербург 2006, с. 220.

[8] Հմմտ. Լալայեան Ե., Սիսիան, էջ 245:

[9] Հմմտ. Լալայեան Ե., Գանձակի գաւառ, էջ 325:

[10] Հայկական դիցաբանությունում անդրաշխարհի մուտքը գտնվում էր Տարոնում՝ Դեմետր և Գիսանե աստվածությունների կուռքերի տեղադրման վայրում Քարքե լեռան գագաթին: Տե՛ս Հարությունյան Ս., Մահվան պատկերացումները հայկական անեծքներում, «Լրաբեր հասարակական գիտությունների» (այսուհետ՝ ԼՀԳ), 1985, N 12, էջ 56, Հովհան Մամիկոնյան, աշխ. Վ. Վարդանյանի, Տարոնի պատմություն, Ե., 1989, էջ 20: Այս նույն համատեքստում կարելի է դիտարկել Ոդիսևսի զոհաբերությունը Հադեսի սահմանին: Տե՛ս Հոմերոս, Ոդիսական XI, 1-50: Սլավոնական դիցաբանությունում սահմանի գաղափարը խորհրդանշում էր Բաբա Յագան, որի ոսկրեա ոտքը նախատեսված էր անդրաշխարհի սահմանից ներս դնելու համար: Հերոսի հանգրվանելը Բաբա Յագայի տանը խորհրդանշում է հենց դադարի փուլը: Տե՛ս Пропп В. նշվ. աշխ., էջ 85-90, Иванов В., Топоров В., Баба Яга, “Мифы народов мира”, т. 1, Москва, 1991, с. 149: Հմմտ. «Գրողի տնակ» արտահայտությունը: Հարությունյան Ս. Մահվան պատկերացումները, էջ 58:

այն հաղորդակից է գերբնական երևույթների հետ, մյուս կողմից՝ կրում է ծիսական ոչ մաքրության կնիք[1]: Այն կարող է ընգծվել ինչպես բնական տեղանքի հնարավորությունները օգտագործելիս[2], այնպես էլ արհեստական եղանակով: Արհեստականների թվին կարելի է դասել դամբարանադաշտի ողջ տարածքը կամ նրա մի հատվածը զատող պարիսպները կամ ցանկապատերը: Այսպես, Բերդիկի դամբարանադաշտը օղակված էր կիկլոպյան պարսպով[3]: Այգեշատում և Նորակերտում երկու աշտարակներ միացնող պարիսպը զատում էր դամբարանադաշտի մի հատվածը[4]: Կապանի Շահումյանի դամբարանադաշտի IV տեղամասի արևմտյան կողմում միաշար ցանկապատ է[5]: Սարապատի NN 7 և 8 դամբարանները պարփակված էին ցանկապատի մեջ[6], Ծիծեռնավանքում, Շամիրամում, Ուջանում դամբարանադաշտի եզրին տեղադրված են զոհասեղաններ[7]:

Դամբարանադաշտում կատարվող արարողությունները

Դամբարանադաշտերում շարժման գործընթացը հնագիտորեն դիտարկվում է մի քանի տարբերակով: Առաջին տարբերակը ներկայացված է յուրատեսակ իմիտացիոն ճանապարհներով՝ դամբարանների շարքերով (Զագալու, Պատշար)[8]: Այս խմբում պետք դիտարկել նաև դեպի Առուճի N 5 դամբարանը տանող եռաշար օրթոստատ քարերի «պուրակը»[9]:

Երկրորդ տարբերակը ներկայացված է դեպի դամբարաններ տանող ճանապարհներով և արահետներով: Այսպիսի ճանապարհների վաղագույն օրինակներից մեկը հավաստված է Թալինի N 10 դամբարանում: Այստեղ հայտնաբերված նյութը բնորոշ է վաղ բրոնզի դարաշրջանին[10]: Առավել ծաղկման այս ճանապարհները հասնում են միջին բրոնզի դարաշրջանում (Թռեղքի և Զուրտակետիի դամբանաբլուրներ): Դրանք կառուցված են բարդ շինարարական տեխնիկայով: Ճանապարհների առավելագույն երկարությունը կազմում է մոտ 400 մետր[11]: Նմանատիպ ճանապարհ հավաստված է նաև Քարաշամբում[12]:

Սակայն այս փուլում ևս առկա են դադարի փուլեր: Հնագիտորեն դրանք ներկայացված են տարբեր տիպի զոհասեղաններով և աշտարակներով: Դրանք կարող էին օգտագործվել մեկ անգամ, ծածկվել հողով և նախատեսվել բազմակի օգտագործման համար: Առաջինների թվին պետք է դասել Կապանի Շահումյանի դամբարանադաշտում հավաստված IV տեղամասի N 4 հարթակը հիմնահողային հարթակի վրա, որտեղ գտնվեցին տասնյակ անոթների մնացորդներ, բրոնզե գոտիներ[13] և նույն դամբարանադաշտի VI տեղամասի N 7 քարե պա-

---

[1] Հմմտ. Авеста, Фрагард, 3, IV, 34.

[2] Հմմտ. Մ. արք Տեր-Մովսիսյանի ակնարկն առ այն, որ հայերը սիրում են բարձունքի գագաթին գերեզմանոց տեղադրել: Տե՛ս Տէր-Մովսիսեան Մ., Յոդուածների ժողովածու, Ս. էջմիածին, 2010, էջ 257:

[3] Տե՛ս Ավետիսան Հ., Գնունի Ա., Բոբոխյան Ա., Մկրտչյան Լ., Բրոնզ-երկաթեդարյան Հայաստանի դամբարանադաշտերի տարածական և կառուցվածքային առանձնահատկությունները, նախնական դիտարկումներ, «Հայագիտության Հարցեր» (այսուհետ՝ ՀՀ), N 2, էջ164:

[4] Տե՛ս Թորամանյան Թ., Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հ. 1, Երևան 1942, էջ 11, Գնունի Ա., Թադևոսյան Ա., Մկրտչյան Լ., Շրեշ բլուր, «Մեծամորյան ընթերցումներ», I, Երևան,, 2017, էջ 31-32:

[5] Տե՛ս Ավետիսան Հ., Գնունի Ա., Բոբոխյան Ա., Մկրտչյան Լ., Բրոնզ-երկաթեդարյան Հայաստանի դամբարանադաշտերի տարածական և կառուցվածքային առանձնահատկությունները, էջ 164:

[6] Տե՛ս Պետրոսյան Լ. Պեղումներ Սարապատում, «Հնագիտական աշխատանքները Հայաստանի նորակառույցներում», I, (այսուհետ՝ ՀԱՀՆ), Ե., 1993, էջ 92:

[7] Տե՛ս Ավետիսան Հ., Գնունի Ա., Բոբոխյան Ա., Մկրտչյան Լ., Բրոնզ-երկաթեդարյան Հայաստանի դամբարանադաշտերի տարածական և կառուցվածքային առանձնահատկությունները, էջ165, Арешян Г., Исследования в Шамираме, с. 505.

[8] Տե՛ս Լալայեան Ե, Նոր Բայազետի գաւառ կամ Գեղարքունիք. Նախապատմական շրջան, «ԱՀ», XIV, Թիֆլիս, 1906, էջ 6, Լալայեան Ե., Նոր Բայազետի գաւառ կամ Գեղարքունիք. Նախապատմական շրջան, «ԱՀ», XIV, Թիֆլիս, 1907, էջ166:

[9] Տե՛ս Թումանյան Գ. Արուճի դամբարանադաշտի ուշբրոնզեդարյան № 5 դամբարանը (թաղման ծեսը մեկնաբանելու փորձ), «Պատմաբանասիրական Հանդես» (այսուհետ՝ ՊԲՀ), N 3, 2005, էջ 160-161:

[10] Տե՛ս Ավետիսյան Պ., Մուրադյան Ֆ. 1994, Թալինի դամբարանադաշտի 1991 թ. պեղումները, «ՀՀ-ում 1991-1992 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան», (այսուհետ՝ ԴՀԱԱԳՆ), զեկուցումների թեզիսներ, Ե., 1994, 5-6:

[11] Տե՛ս Нариманишвили Г. Новые открытия в Триалетской культуре, Тбилиси, 2009, с. 58-59.

[12] Տե՛ս Melikyan V. 2015, Newly Found Middle Bronze Age Tombs of Karashamb Cemetery: Preliminary Report, «Aramazd, Armenian Journal of Near Eastern Studies», IX/1, p. 9-10.

[13] Տե՛ս Ավետիսան Հ., Գնունի Ա., Բոբոխյան Ա., Մկրտչյան Լ., 2017, Բրոնզ-երկաթեդարյան Հայաստանի դամբարանադաշտերի տարածական և կառուցվածքային առանձնահատկությունները..., էջ166-167:

տերով հարթակը, որտեղ հայտնաբերվել է բրոնզե օղ[1]: Բազմակի օգտագործման համար էին նախատեսված Այգեշատի, Սևասարի ժայռային հարթակները[2]: Նույն խմբում կարելի է դասել դամբարանադաշտերում հավաստված աշտարակները (Արդար Դավիթ, Լիսագոր, Ուջան, Այեգշատ և այլն)[3]: Հատկանշական է, որ Սևասարի, Լիսագորի, Զիրիկի, Արդար Դավթի կառույցները կենտրոնական դիրք են զբաղեցնում դամբարանադաշտերում[4]:

Թաղման արարողակարգի նախապատրաստումը

Դամբարանային կառույցի սահմանը՝ կրոմլեխը, հանդիսանում է թաղման արարողության այս հատվածի դադարի փուլը: Այս սահմանը դամբարանային կառույցներում արտահայտվում է նաև կրոմլեխին կից քարե արկղերով (Ծաղկալանջ)[5] կամ հորած անոթներով (Բջնիի NN 3, 4[6], Ծաղկաշատի N 1[7]:

Դամբարանի սահմանը նշանավորող կետից սկսվում է հանգուցյալի վերջին երկրային ճանապարհը: Հնագիտորեն այդ ճանապարհը ներկայացված է մի շարք փուլերով, որոնք ներառում են թաղման վայրի նախապատրաստումը, ննջեցյալի նախապատրաստումը, բուն թաղման արարողությունը, գույքի տեղադրումը, հետթաղումային արարողությունների իրականացումը[8]: Թաղման վայրի նախապատրաստումն իր մեջ ներառում է դեպի թաղման կառույց ճանապարհի հավաստումը և բուն թաղումային կառույցի նախապատրաստումը: Կրոմլեխից թաղման կառույց տանող ճանապարհները հավաստված են մի քանի տարբերակով: Ա. դրոմոսներ. թաղումային հուշարձաններում հավաստված է դրոմոսների մի քանի տիպ՝ թեք (Ոսկեհասկի N 5, Վերին Նավերի N 16, Մաիսյանի N 2 դամբարաններ)[9], հորիզոնական (Լճաշենի N 123 դամբարանը, Լոռի Բերդի NN 61, 71, 77, 94 [10], ուղղահայաց կատակոմբային թաղումներում (Ոսկեհասկ NN 1-4, 6-7, Արթիկ)[11]: Բ. քարաշարեր և քարե արահետներ. այս խմբում պետք է դիտարկել Կերենի N 1 դամբարանում դեպի կարաս տանող քարաշարը, որը փաստորեն հանդիսանում է դրոմոսի նմանակում[12]: Վերին Նավերի N 41 դամբարանում քարաշարը արևելյան և արևմտյան կողմերից տանում էր դեպի դամբարանի կենտրոն[13]: Թալինի դամբարանադաշտի N 12 դամբարանում թաղման կառույցի հարավային և հյուսիսային կողմերից բացված էին անցումներ[14]: Գ. մուտքեր. պարզագույն մուտքը ներկայացված էր

---

[1] Պեղումները Ա. Գնունու և Լ. Մկրտչյանի (2018 թ.):

[2] Տե՛ս Ավետիսան Հ., Բոբոխյան Ա., Գնունի Ա. Բացօթյա պաշտամունքային հարթակները և դրանց տիպերը, «Մեծամոր. կեսդարյա պեղումների տարեգրություն», Ե., 2015, 38-39:

[3] Տե՛ս Аветисян Г., Гнуни А., Мкртчян Л., Бобохян А. նշվ. աշխ., էջ 316: Աշտարակատիպ կառույցների մասին մանրամասն տե՛ս Մկրտչյան Լ. Հայաստանի բրոնզ-երկաթեդարյան աշտարակատիպ կառույցները, «Մեծամորյան ընթերցումներ», I, էջ 298-317:

[4] Տե՛ս Ավետիսյան Հ., Գնունի Ա., Բոբոխյան Ա., Մկրտչյան Լ., Բրոնզ-երկաթեդարյան Հայաստանի դամբարանադաշտերի տարածական և կառուցվածքային առանձնահատկությունները, էջ166: Նկատելի է, որ դամբարանադաշտի զարգացումը ծայրամասից կենտրոն, նրա կապը «արտաքին» աշխարհի հետ համադրելի է անդրաշխարհի մասին դիցաբանական պատկերացումների հետ: Այսպես Ինաննան անդրաշխարհ թափանցելու համար հաղթահարում է մի քանի դարպասներ, սլավոնա-բալթական դիցաբանությունում հանգուցյալներին 9 դարպասով անց է կացնում Սովին, սլավոնական դիցաբանությունում Բաբա Յագան պահպանում է անդրաշխարհի մուտքը, իսկ Օձը՝ կենտրոնական մասը: Տե՛ս Крамер С., նշվ աշխ., էջ 134-135, Ловмянский Г., նշվ աշխ., էջ 116-117, Пропп В. նշվ. աշխ.. էջ 185:

[5] Ֆ. Մուրադյանի անձնական հաղորդումը:

[6] Բջնիի պեղումները՝ Ի. Ղարիբյանի, Հ. Հակոբյանի, Ֆ. Մուրադյանի, Ա. Գնունու:

[7] Տե՛ս Խնկիկյան Օ., Դամբարանների պեղումներ Թումանյանի շրջանի Ծաղկաշատ գյուղում, «ՀԱՀՆ», էջ 86:

[8] Տե՛ս Геннинг В., Борзунов В. Методика статистической характеристики и сравнительного анализа погребального обряда, «Вопросы археологии Урала». 13, Свердловск, 1975, с. 44.

[9] Տե՛ս Петросян Л., Раскопки памятников Кети и Воскеаска, Ереван, 1989, с. 69-70, Սիմոնյան Հ., Վերին Նավեր, Ե., 2006, էջ 109, Арешян Г. Охранные раскопки в Маисяне, «АО» в 1983 г., Москва 1985, с. 484-485.

[10] Տե՛ս Մնացականյան Հ., Լճաշենի նյութական մշակույթի զարգացման հիմնական էտապները, «ՊԲՀ», 1965, N 2, էջ 96, Դևեջյան Ս., Լոռի Բերդ II, Երևան 2006, էջ 25, 30, 47, 85:

[11] Տե՛ս Петросян Л., նշվ. աշխ., էջ 69-70, Хачатрян Т., Артикиский некрополь, Ереван 1979, с. 4 и сл.

[12] Տե՛ս Գնունի Ա., Խաչատրյան Գ., Միքայելյան Գ. Կերենի դամբարանադաշտի հյուսիսային բլրի պեղումները, «Հին Հայաստանի մշակույթը», XIV, Ե., 2008, 182-183:

[13] Տե՛ս Սիմոնյան Հ., նշվ. աշխ., էջ 28:

[14] Տե՛ս Ավետիսյան Պ., Մուրադյան Ֆ., Թալինի դամբարանադաշտի 1989 թ. պեղումները, «ԴՀԱԱԳՆ» 1989-1990 թթ., Ե., 1991, 4-5:

պատից հեռացված քարով[1] (Կերենի N 64 դամբարան), սակայն հանդիպում են նաև աստիճանաձև (Զվելիի NN 1-2 դամբանաբլուրներ)[2] կամ շեմքով (Հառիճի դոլմենատիպ կառույց) մուտքեր[3]: Դ. խուց տանող պարուրաձև կրոմլեխները (Վերին Նավերի N 23 դամբարան)[4]:

Գործողությունների այս խմբի մեջ կարելի է ներառել թաղման կառույցի կերտումը և նախապատրաստումը, այդ թվում դիակիզման համար նախատեսված հարթակի[5], խցի նախապատրաստումը[6] հանգուցյալին ընդունելուն:

Հաջորդ ենթափուլն առնչվում է մարմնի նախապատրաստմանը թաղման արարողությանը: Այս փուլին կարող է առնչվել դիակի տեղադրումը մահվան աշտարակում[7]: Այս նույն համատեքստում կարելի է դիտարկել ակնակալների, շրթնակալերի և պսակների օգտագործումը անտիկ Հայաստանի թաղման ծեսում[8]: Արարողությունը նպատակ ուներ հաստատագրել հանգուցյալի պատրաստությունը անդրաշխարհ ընթանալուն:

Ննջեցյալի թաղումը. ողջերի և հանգուցյալների ճանապարհների բաժանումը

Թաղման ծիսակարգի կուլմինացիոն փուլը հանդիսանում է բուն թաղման գործընթացը: Պետք է նկատի ունենալ, որ մահվան պահից մինչև թաղման պահը այն ժամանակահատվածն է, որը հանգուցյալը և ողջերն անցնում են իրար հետ[9]:

---

[1] Տե՛ս Գնունի Ա., Կերենի «քրմական» դամբարանի պեղումները, «Բանբեր Երևանի համալսարանի» (այսուհետև՝ «ԲԵՀ»), 2006, N 3, էջ 215:

[2] Տե՛ս Гамбашидзе О., Гамбашидзе И. Работы Месхет Джавахетской экспедиции, «Полевые археологические исследования в Грузии в 1986 г.», Тбилиси, 1991, с. 51.

[3] Տե՛ս Хачатрян Т, Древняя культура Ширака, Ереван, 1975, с. 36.

[4] Տե՛ս Սիմոնյան Հ., նշվ. աշխ., էջ 50:

[5] Այսպես Կերենի դամբարանադաշտի NN 1, 106 դամբարաններում դիակիզումն իրականացվում էր հատուկ հարթակներին: Տե՛ս Գնունի Ա., Խաչատրյան Գ., Միքայելյան Գ., նշվ. աշխ., էջ 182-183, Avetisyan H., Gnuni A., Danielyan H., Bobokhyan A. Reflections on Spatial and Structural Traits of “Cemeteries: The Case of Bronze and Iron Age Syunik, Armenia”, “Tüba-Ar”, Special Issue, Ankara, 2018, p. 193): Քարաշամբի մեծ դամբարանում դիակիզումն իրականացվել էր ցանկապատված հարթակի վրա: Տե՛ս Оганесян В., Раскопки Карашамбского могильника в 1987 г., «ՀԱՀՍ», էջ 27:

[6] Կերենում կմախքի և մայր հողի միջև կա միջնաշերտ, որի նպատակն էր բացառել «պիղծ» մարմնի և «մաքուր» մայր հողի շփումը: Հմմտ. Авеста, Фрагард 8, II, 10: Ամենայն հավանականությամբ, նույն նպատակով Այգեշատի N 10 դամբարանում հատակը սվաղված էր կավով: Տե՛ս Թորոսյան Ռ., Օրագիր N 1, 1971, Էջմիածնի շրջանի Այգեշատ գյուղի դամբարանադաշտ, Էջմիածնի պատմաազգագրական թանգարան Ռ. Թորոսյանի ֆոնդ: Արուճի III դամբանաբլուրում խցի տարածքում կան խարույկի հետքեր: Այն ժամանակ, երբ ոսկորներն այրված չէին (Арешян Г., Курганы Аруча, «АО» в 1978 г., Москва 1979, с. 518-519), խարույկը նպատակ ուներ մաքրագործել դամբարանի տարածքը: Արտաշատի դամբարանադաշտում որոշ դամբարաններում առկա էին մոխրի մնացորդներ, որոնք նույնպես պետք է խորհրդանշեին մաքրագործող կրակը (Խաչատրյան Ժ., Արտաշատ II, Ե., 1981, էջ 42): Մաքրագործող նշանակություն ուներ նաև ձուն: Արտաշատի դամբարաններում հայտնաբերված է ձվի կճեպ, իսկ Սիսիանում քարե ձվեր (Խաչատրյան Ժ., նշվ. աշխ., էջ 57):

[7] Ելնելով աշտարակների տեղադրությունից, Ֆ. Մուրադյանը բաժանում էր դրանք երեք տիպի. պաշտպանական, պաշտամունքային և մահվան (Ֆ. Մուրադյանի անձնական հաղորդումը): Որոշ դեպքերում (Արդար Դավիթ, Աղավնատուն, Ուջան, Արտավան) աշտարակի կենտրոնական հատվածում հավաստված է ուղղանկյուն խցանման կերտվածք, սակայն Աղավնատանը և, ամենայն հավանականությամբ, Արդար Դավիթում, թաղումները պատկանում են ավելի ուշ ժամանակաշրջանի (Արդար Դավիթ աշտարակի վերգետնյա նյութը բնորոշ է վաղ բրոնզին, այն ժամանակ, երբ կենտրոնական հատվածից վերգետնյա նյութը՝ վաղ երկաթին: Հետազոտությունները՝ Հ. Ավետիսյան, Ա. Բոբոխյան, Ա. Գնունի, Լ. Մկրտչյան: Աղավնատան աշտարակում անտիկ թաղման մասին՝ Հ. Հակոբյանի անձնական հաղորդումը): Ուջանում և Արտավանում խցանման կերտվածքները տեղադրված են անմիջապես ժայռային հենքի վրա (Ուջանի հետազոտությունները՝ Լ. Մկրտչյանի, Արտավանի՝ Գ. Սարգսյանի, Ա. Բոբոխյանի, Ա. Գնունու, Լ. Մկրտչյանի): Այն մասին, որ Ծաղկալանջի աշտարակները կարող էին հանդիսանալ մահվան աշտարակներ, կողմնակիորեն վկայում է այն փաստը, որ Ծաղկալանջի որոշ դամբարաններում ոսկորները տեղադրված էին փափուկ հյուսվածքներից ազատված: Տե՛ս Մուրադյան Ֆ., Ծաղկալանջի դամբարանադաշտի պեղումները, «ԴՀԱԱԳՆ» 1987-1988 թթ., Ե., 1989, էջ 13-14: Հմմտ. հաղորդումներն առ այն, որ զրադաշտական ավանդույթի համաձայն դիակները դնում էին, որպեսզի գազանները և թռչունները հոշոտեն դրանք (Авеста, Фрагард 6, V, 45-49) Հմմտ. Բուզանդի հաղորդումը Մուշեղ Մամիկոնյանի մարմինը մահվանից հետո աշտարակի գագաթին տեղադրելու մասին (Փավստոս Բուզանդ Պատմություն Հայոց, Ե., 1987, V, ԼԶ), Արա Գեղեցիկի մարմինը ապարանքի վերնատանը տեղադրելու մասին առասպելը (Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց Ա, ԺԵ): Հմմտ. «Եզնըկա Կողբացւոյ Եղծ աղանդոց», Ա, ԻԵ:

[8] Տե՛ս Խաչատրյան Ժ., նշվ աշխ., էջ 43-44, Հմմտ. հնդկական թաղման ծեսում ննջեցյալի դեմքը ծածկված է կովի ճարպաշերտով: Տե՛ս Пандей Р., նշվ. աշխ., էջ 193:

[9] Տե՛ս Хайдегер М., նշվ. աշխ., էջ 273:

Այս պահին իրականացվող գործողությունները նպատակ ունեն դյուրացնել հոգու համբարձումը: Հնագիտորեն այս գործողությունների թվին կարելի է դասել որոշակի դիրքով դիադրումը, դիամասնատումը[1], դիակիզման գործընթացը[2], դիակառքի կամ պատգարակի առկայությունը[3], մեդիատոր կենդանիների զոհաբերությունը (Լոռի Բերդի N 6, 7)[4], կմախքի պատումը օքրայով (Լճաշենի N 29 դամբարան)[5]:

Տարբեր պատումներում և վարքագրություններում անդրաշխարհ անցումը նկարագրվում է որպես դժվարին ճանապարհ[6]՝ մահվան ստվերների միջով (Սաղմ ԻԲ, 4): Այս ճանապարհին փոխվում է նաև հոգու արտաքին տեսքը: Քարաշամբի և Թռեղքի գավաթների վրա պատկերված սպանված զինվորների մոտ ի հայտ են գալիս գայլի պոչեր[7]: Թեպետ հոգու այս վերջին արշավին ողջերը չեն մասնակցում, այնուամենայնիվ նրանք կարող են որոշ օժանդակություն ցուցաբերել՝ դյուրացնելով այն: Անտիկ ժամանակաշրջանում այդ նպատակին էին ծառայում հանգուցյալի բերանը կամ ձեռքերի մեջ դրվող մետաղադրամները, որը պետք է վճարվել դեպի անդրաշխարհ ուղևորվելու համար[8]: Այսպես, մետաղադրամներ հայտնաբերվել են Գառնիի և Այգեշատի դամբարանադաշտերում[9]: Այս ճանապարհի երկայնքով ևս կան որոշ հանգրվաններ, որոնք հավաստվում են դադարի պահերով: Այսպես, ժողովրդական հավատալիքների համաձայն հոգին մահվանից հետո առժամանակ մնալով նախկին բնակության վայրում, մեկնում է Երուսաղեմ, երեք անգամ համբուրում Տիրոջ Գերեզմանը, հետո ուղևորվում է Երկինք[10]: Վարքագրություններում մեջ հիշատակվում են «հանգրվանային» դատաստաններ, որոնք իրականացնում են սատանաները և որոնցից ազատվել կարելի է ոսկով[11]: Հոգու անդրաշխարհ մեկնելիս որոշ հանգրվանների մասին կարող է վկայել նաև թաղման գույքի տեղադրումը դամբարանում լցոնմանը զուգընթաց (Կերենի N 101դամբարան)[12] կամ մի քանի փուլով (Վերին Նավերի N 7 դամբարան)[13]:

Այս ճանապարհի ավարտը պետք է հանդիսանա հանդերձյալ աշխարհ ժամանելը, որտեղ և պետք է որոշվի հոգու ճակատագիրը: Սկզբունքորեն դադարի պահ հանդիսացող այս փուլը, ըստ Հ. Պետրոսյանի, կարող է ներկայացված լինել «կյանքի մատյանի» նմանակ հանդիսացող կոթողներով (հարթ քառանկյուն, զուգահեռանիստի տեսք ունեցող պատկերազարդ տապանաքարերը, հանգուցյալի պատկերով խաչքարերը)[14]:

---

[1] Հմմտ. Կերենի N 99 դամբարանը, որտեղ գանգը տեղադրված էր մարմնից որոշ հեռավորության վրա: Տե՛ս Գնունի Ա., Աղիկյան Լ., Խաչատրյան Գ., Վարդանյան Գ., Թադևոսյան Ա., Կերենի 2011-2012 թթ. պեղումների հիմնական արդյունքները, «Հնագիտական ուսումնասիրություններ Արցախում 2011-2012 թթ», Ստեփանակերտ, 2015, էջ 27:

[2] Տե՛ս Геннеп А., նշվ. աշխ., էջ 140, Հմմտ. Пандей Р., նշվ. աշխ., էջ 202: Դիակիզման գործընթացն իր մեջ ներառում է մի քանի փուլ՝ բուն դիակիզումը, խարույկը հանգցնելը, ոսկորները հավաքելը և աճյունասափորում տեղադրելը: Այսպես, Կերենի N 1 դամբարանում հարթակը կրում էր այրման հետքեր և ծածկված էր ցեմենտացված մոխրի 20-50 սմ հզորության շերտով: Հմմտ. Հոմերոս, Իլիական, թարգմ Հ. Համբարձումյան, Ե., 1955, XII, 250, Gurney O . The Hittites, London, 1962, p. 164-165, Пандей նշվ.աշխ., էջ 206-207:

[3] Տե՛ս Гнуни А. 2003, Опыт анализа погребального инвентаря двух погребений эпохи средней бронзы Армении (на основе данных индийской мифологии), «ԼՀԳ», 2003, N 3, с. 73-76:

[4] Տե՛ս Гнуни А. նշվ. աշխ., էջ 73-76, Деведжян С., Лори Берд 1, Ереван 1981, с. 25.

[5] Տե՛ս Պետրոսյան Լ., Լճաշենի դամբարանադաշտը, Երևան 2018, էջ 52:

[6] Տե՛ս Հարությունյան Ս., Հայ առասպելաբանություն, էջ 434-436, Առաքել Սյունեցի, Ադամագիրք, աշխ. Ա. Մադոյանի, Ե., 1989, Ա, 2-4, Крывелев И., Критика религиозного учения о бессмертии, Москва, 1979, с. 38-44, հմմտ. Մաշտոց, յորում աւանդին սրբազան արարողութիւնք ազգիս ըստ Սահմանադրութեան Սուրբ Եկեղեցւոյս Հայոց, Ս. Էջմիածին, 2001, էջ 60-70, 98-108:

[7] Տե՛ս Оганесян В., Серебряный кубок из Карашамба, «ԼՀԳ», 1988, N 4, էջ 155, Հմմտ. ռուսական ողբերգերից մեկում հոգին վերափոխվում է բազեի: Տե՛ս Забылин М., Русский народ: его обычаи, обряды, суеверия и поэзия, Москва, 1990, с. 122.

[8] Տե՛ս Т.-Г [Тахо-Годи] А. Харон, «Мифы народов мира», т. 2, Москва, 1992, с. 584.

[9] Տե՛ս Хачатрян Ж. 1976, Гарни V, античный некрополь, Ереван, 1976, с. 21, Թորոսյան Ռ., Տեր-Մարտիրոսյան Ֆ., Ուշ հելենիստական ժամանակաշրջանի դամբարաններ էջմիածնի շրջանի Այգեշատ գյուղում, «ՊԲՀ», 1976, N 2, էջ 268:

[10] Տե՛ս Հարությունյան Ս., Հայ առասպելաբանություն, էջ, 434:

[11] Տե՛ս Крывелев И., նշվ. աշխ., էջ 39:

[12] Տե՛ս Գնունի Ա., Աղիկյան Լ., Խաչատրյան Գ., Վարդանյան Գ., Թադևոսյան Ա. , նշվ. աշխ., էջ 27-28:

[13] Տե՛ս Սիմոնյան Հ., նշվ. աշխ., էջ 44:

[14] Տե՛ս Պետրոսյան Հ., 2003, Ողջերը և մեռածները, «Գիտություն և տեխնիկա», 2003, NN 6-7, էջ 57:

Հիշատակի արարողությունները

Թաղման արարողությունը ավարտելուց հետո ողջերի և հանգուցյալների ճանապարհները ընթանում են տարբեր ուղղություններով: Ծեսերը հիմնականում հետապնդում են զատման նպատակ և բնորոշվում են որպես դադարի փուլ: Այս պահի հաստատագրումը հնագիտորեն ներկայացված է մի շարք փաստերով: Ա. Դրոմոսի փակում: Այս միջոցառումը կարող էր իրականացվել ինչպես կոնստրուկտիվ՝ սալերով (Լոռի Բերդի NN 60,65, Ապարանի N 2, Թալինի N 11, Շամիրամի NN 1-2, Արթիկի NN 8, 273 դամբարաններում)[1], քարաշարերով (Լոռի Բերդի N 77 Լճաշենի N 43, Քարոտ հողերի NN 5, 8, Ոսկեհասկի N 2, Շամիրամի N 5 դամբարաններում)[2], մուտքը փակելով կամ լցոնելով[3], այնպես էլ խորհրդանշական զոհաբերություն կատարելով (Զրվեժի N 1, Լոռի Բերդի N 65, Թալինի N 7, Քանագեղի N 1 դամբարաններ)[4]: Բ. Կրկնակի կրոմլեխի կառուցում (Բջնիի N 1, Այգեշատի N 3, Քարաշամբի NN 653, 759 դամբարաններ)[5]: Գ. Դամբարանը փակելը: Դամբարանը փակելը նշանավորում էր ողջերի և մահացածի վերջնական զատումը[6]: Այն կարող է ամրագրվել մի շարք արարողություններով [հանգուցյալին մատուցվող վերջին նվիրատվությունները, զոհաբերությունները (Մայիսյանի N 4, Թրելիի N 43 դամբարաններ)][7]: Այս նույն համատեքստում պետք է դիտարկել նաև դամբարանային կառույցի վրա (Լոռի Բերդի N 79 դամաբարան)[8] կամ անմիջական հարևանությամբ (Վարդուտ)[9], բայց լիցքի տակ գտնվող զոհասեղանները:

Հոգու վերածննդի և անդրաշխարհի հետ հնարավոր կապի մասին պատկերացումները

Մահվան ընկալման մեջ վերածնունդի գաղափարն ունի հանգուցային նշանակություն (հմմտ.՝ Ա Կորնթ. ԺԳ, 15-22): Դամբարանային գույքի որոշ տարրեր (օր. ՝ կաթսան, գավաթը), զոհաբերված որոշ կենդանիներ իրենց մեջ պարունակում են վերածնունդի գաղափարը[10]: Ռ. Թորոսյանը այս համատեքստում դիտարկում է Այգեշատի N 5 քարարկղային դամբարանից հայտնաբերված թիթեղյա արձանիկները, որոնք նա համադրում է Վանատուրի և Ամանորի պատկերների հետ[11]: Վերածնունդի համատեքստում պետք է դիտարկվեն նաև որոշ կոթողային հուշարձաններ: Այսպես, վերածնունդի հետ կարող են կապվել դամբարանախցում տեղադրված ֆալիկ կոթողները[12]:

Մյուս կողմից, որքան էլ օտարված լինեն հանգուցյալները «այս» աշխարհից, նրանք համայնակիցների հետ կապն այնուամենայնիվ պահպանվում է: Այս կապն արտահայտվում է պարբերաբար կրկնվող արարողություններով (հոգեհաց և հիշատակի օրեր): Հոգեհացի հետքեր հայտնաբերվել են Քարաշամբի մեծ դամբարանի պեղումների ընթացքում[13]: Նմանատիպ արարողությունների մասին են վկայում նաև ծածկասալերի վրա կոտրված կավա-

---

[1] Տե՛ս Դևեջյան Ս., նշվ. աշխ., էջ 20, 29, Մուրադյան Ֆ. Պեղումներ Ապարանի ջրամբարի ափին, «ԴՀԱԱԳՆ» 1985-1986 թթ, Ե., 1987, էջ 20-21, Хачатрян Т., Артикский некрополь, с, 20, 59, Арешян Г., Раскопки больших Шамирамских курганов, «АО» в 1981 г., 1983, с. 425-426.

[2] Տե՛ս Դևեջյան Ս., նշվ. աշխ., էջ 51, Պետրոսյան Լ., Լճաշենի դամբարանադաշտը, էջ, 49, Петросян Л., նշվ. աշխ., էջ 38, Арешян 1983, Раскопки больших Шамирамских курганов, с. 425-426.

[3] Տե՛ս Хачатрян Т., Артикский некрополь, с. 59-61, 66, 72, 75.

[4] Տե՛ս Թումանյան Գ. Ա. Զրվեժի վաղբրոնզեդարյան N 1 դամբանաբլուրի պեղումները, «ՀԱՀՆ», էջ, 8-9, Դևեջյան Ս., նշվ. աշխ., էջ 29, Արեշյան Գ. Պահպանական պեղումներ Քանագեղի դամբարանադաշտում, «ԴՀԱԱԳՆ» 1979-1980 թթ., Ե., 1981 էջ 3-4:

[5] Տե՛ս Ղարիբյան Ի., Հակոբյան Հ., Գնունի Ա., Խաչատրյան Գ., Վարդանեսովա Տ. Հնագույն Բջնին, «ՊԲՀ», 2008, N 3, էջ 188, Թորոսյան Ռ., նշվ. աշխ.,, Геворкян А. 1993, Раскопки Карашамбского некрополя, «ՀԱՀՆ», էջ 52:

[6] Հմմտ. գերեզմանի կնքման արարողությունը հայկական թաղման ծեսում (Մաշտոց, էջ 70, 108):

[7] Арешян Г., Раскопки в Маисяне «АО» в 1984 г., Москва 1986, с. 427-428, Абрамишвили Р. (ред.), 1979, Тбилиси I Археологические памятники, Тбилиси, 1979, с. 16.

[8] Տե՛ս Դևեջյան Ս., նշվ. աշխ., էջ 62:

[9] Տե՛ս Գնունի Ա., Խաչատրեան Գ. 2003, Դաշտային հետազօտութիւններ Շալուա գետի աւազանում եւ Հոչանցի ձախ ափին, «Հանդէս Ամսօրեայ», 2003, I-XII, էջ252-254:

[10] Տե՛ս Арешян Г., Индоевропейский сюжет в мифологии населения междуречья Куры и Аракса II тыс. до н. э., “Вестник Древней Истории”, 1988, N 2 с. 85-101, Гнуни А., նշվ. աշխ., էջ, 75-76:

[11] Տե՛ս Թորոսյան Ռ., նշվ. աշխ., էջմիածնի Պատմաազգագրական թանգարան (այսուհետ՝ ԷՊԱԹ) ի/հ 4125

[12] Տե՛ս Գնունի Ա., Հայկական լեռնաշխարհի ֆալիկ հուշարձանների տիպերն ու ծիսական գործառույթները, «ԲԵՀ», 2004 N 2, էջ 129-130:

[13] Տե՛ս Оганесян В., Раскопки Карашамбского могильника в 1987 г., с. 27.

նոթները (Վերին Նավերի N 41, Կերենի N 105, Կապանի 4/1, 6/4, Ծաղկաշատի N 2 դամբարաններ)[1]:

Այս նույն նպատակին էին ծառայում դամբարանի վրա տեղադրված կոթողները մենհիրները[2], մահարձանները (օր.՝ Այգեշատի դամբարաններում)[3], ֆալոսները[4]: Բացառված չէ, որ նույն գործառույթն ունեին նաև վիշապ-քարակոթողները[5]:

Այս համատեքստում պետք է դիտարկել առավել նշանավոր դամբարանների փոխակերպմանը պաշտամունքային հարթակների[6] կամ դամբարանի վրա զոհասեղանի կառուցումը (Կապանի 5/3 դամբարան): Մովսես Խորենացու վկայությամբ, Տիգրան թագավորը իր եղբայր Մաժանի գերեզմանի վրա կառուցեց բագին, որպեսզի այնտեղի զոհերից վայելեն բոլոր անցորդները[7]:

Միջոցներ էին ձեռնարկվում նաև հանգուցյալների հոգիներին դեպի «այս» աշխարհը ճանապարհը ապահովելու համար[8]: Այս նպատակով դամբարանի ծածկի քարերում կարող էր փորվել միջանցիկ անցք (Վերին Նավերի N 21 դամբարան)[9]: Այդ նույն նպատակին էին ծառայում թաղման միջոցներում արված անցքերը: Այսպիսի անցքեր կան կարասների, աճյունասափորների[10], սարկոֆագների վրա (Վաղարշապատի դամբարանադաշտ)[11]:

Միևնույն ժամանակ, հետթաղումային ծեսերի համակարգը հետապնդում էր զատման նպատակ: Այս համատեքստում է դիտարկում Ա. Գենեպը սգի և սգահանության գործընթացները[12]: Վարանդայում քահանան սգահան անելու համար գերեզմանից վերցրած ջուրը բաժանում էր հարազատներին, իսկ հողը քսում էր կրծքավանդակին[13]:

Եզրակացություն

Վերն ասվածից գալիս ենք այն եզրակացության, որ թաղման և հիշատակի ծեսերի համակարգը մի ամբողջական գործընթաց է, որը սկսվում է դեռ մարդու կենդանության օրոք և ավարտվում մաքրագործման ծեսերի ավարտից հետո: Այս ծեսերը հետապնդում են ինչպես զատման, այնպես էլ միավորման նպատակներ: Դրանք արտացոլվում են ինչպես ազգաբանական, այնպես էլ բանագիտական, դիցաբանական և հնագիտական նյութում:

---

[1] Տե՛ս Սիմոնյան Հ,, նշվ. աշխ., էջ 29, Գնունի Ա., Աղիկյան Լ., Խաչատրյան Գ., Վարդանյան Գ., Թադևոսյան Ա., նշվ. աշխ., 23, Ավետիսան Հ., Բոբոխյան Ա., Գնունի Ա. 2015, Բացօթյա պաշտամունքային հարթակները և դրանց տիպերը, էջ 32, Խնկիկյան Օ., նշվ. աշխ., էջ 86.

[2] Տե՛ս Нариманишвили Г., Шаншашвили Н., Нариманишвили Д., Новые данные о менгирах Южной Грузии, Ա. Պետրոսյան, Ա., Բոբոխյան (խմբ.), Վիշապ քարակոթողները, Ե., 2015, էջ 187, Ինգլինգների սագայում (XII) նկարագրվում է մի դրվագ, երբ թզուկը դուրս է գալիս քարից և առևանգում է իշխանին (Стурлусон С. 1980, Круг Земной (подг. Гуревич А., Кузьменко Ю., Смирницкая О., Стеблин-Каменский М.), Москва, 1980, с. 17):

[3] Տե՛ս Թորոսյան Ռ., նշվ. աշխ., Avetisyan H., Bobokhyan A., Gnuni A., Sargsyan G., Antropomorph Statues of Ancient Harzhis, «Բանբեր Հայագիտության», 2017, N 1, էջ, 58-59:

[4] Տե՛ս Գնունի Ա., Հայկական լեռնաշխարհի ֆալիկ հուշարձանների տիպերն ու ծիսական գործառույթները, էջ 128-129:

[5] Տե՛ս Нариманишвили Г., Шаншашвили Н., Нариманишвили Д.,, նշվ. աշխ., էջ 128-129:

[6] Հմմտ. Avetisyan H., Gnuni A., Danielyan H., Bobokhyan A. 2018, Reflections on Spatial and Structural Traits of Cemeteries, p. 192, Нариманишвили Г., նշվ. աշխ., էջ, 99:

[7] Տե՛ս Մովսես Խորենացի, Հայոց Պատմություն, II, ԿԵ:

[8] Հմմտ. Ըստ հայ ժողովրդական հավատալիքների հինգ նավակաթիկներին հոգիները վերադառնում են «այս» աշխարհ և շրջում իրենց գերեզմանների և տների շուրջ, այցելում հարազատներին: Տե՛ս (Աբեղյան Մ., Հայ հին գրականության պատմություն, մաս I, Ե., 1944, էջ13:

[9] Տե՛ս Սիմոնյան Հ., նշվ. աշխ., էջ 49:

[10] Տե՛ս Հմայակյան Ս., Վանի թագավորության պետական կրոնը, Ե., 1990, с. 78, Есаян С., Биягов Л., Амаякян С., Канецян А. 1991, Биайнская гробница в Ереване, «Археологические памятники Армении», N 15, вып. II, Ереван, 1991, с. 6.

[11] ԷՊԱԹ, ի/հ 3434:

[12] Геннеп А., նշվ. աշխ., էջ 135-136:

[13] Տե՛ս Լալայեան Ե., Վարանդա, էջ 183:

Թաղման և հիշատակի արարողակարգի հիմնական փուլերը

Գործողության փուլը և անվանումը	գործողության իմաստավորումը				գործողության բնույթը	
	զատում	հանգուցյալի ադապտացիա անդրաշխարհին	մարմնի և հոգու տեղափոխում	հետադարձ կապի ապահովում	շարժում	դադար
Գործողություններ նախքան մահը						
Մահացողի կողմից մոտալուտ մահվան փաստի հավաստումը	x					
Կատվի կամ աքաղաղի զոհաբերություն		x			x	
մահացողին հաստատուն դիրք հաղորդելը	x					x
առանձին վայր տեղափոխելը	x					x
վերջին հրաժեշտը	x					x
մահացողին ջուր տալը		x			x	
Սիրելի ուտելիքների մատուցումը		x			x	
Մահվան պահից մինչև մարմնի տեղափոխումը						
մարմնին որոշակի դիրք հաղորդելը	x					x
աչքերը փակելը	x					x
կզակը կապելը	x					x
ոտքերի մատները կապելը	x					x
մահացածներին ուղղվող բարևները				x	x	
հրեշտակի մուտքի համար պատուհանները բացելը			x		x	
Հանգուցյալի ձեռքին մոմ դնելը			x		x	
հանգուցյալին լողացնելը		x			x	
դագաղը հանելուց դուռը թակելը	x					x
հանգուցյալին լողացնելուց հետո արարողակարգային իրերի ոչնչացումը	x					x
Մարմնի տեղափոխումը հանգստարան						
Բնակավայրը և դամբարանադաշտը կապող ճանապարհները*			x		x	
եկեղեցու բակում դագաղի տեղադրումը			x			x
Ճանապարհի ընթացքում կանգ առնելը և թաղման կարգ կատարելը			x			x
հանգստարանի սահմանի ընդգծումը պարսպով կամ ցանկապատով*	x					x
զոհասեղան հանգստարանի սահմանին*	x					x
Մարմնի տեղափոխումը դամբարանադաշտի սահմաններում						
դամբարանների շարքեր*	x				x	
դեպի կոնկրետ դամբարան տանող ճանապարհներ*	x				x	
քարաշար «պուրակներ» *	x				x	
զոհասեղաններ*		x	x			x
աշտարակներ*		x	x			x
Դամբարանում կատարվող արարողությունները						

Կառույցի սահմանազատումը						
Կրոմլեխ*	x					x
Կառույցի սահմանին արկղեր և հորված անոթներ*	x					x
Ճանապարհ դեպի կառույց					x	
դրոմոս*			x		x	
քարաշար*			x		x	
մուտք*			x		x	
պարուրաձև կրոմլեխ*			x		x	
Թաղման կառույցի նախապատրաստում						
Դիակիզման հարթակի նախապատրաստում*			x		x	
Թաղման կառույցի կառուցում*		x				x
Թաղման խցում միջնաշերտի լցոնումը*		x				x
Խցի մաքրագործում հրով		x			x	
Մաքրագործող իրերի տեղադրում		x			x	
Մարմնի նախապատրաստումը թաղման						
Մարմնի տեղադրումը մահվան աշտարակում*		x				x
Ակնակալերի և շրթնակալերի տեղադրումը*		x				x
Թաղման արարողակարգը և հոգու ճանապարհը անդրաշխարհ						
դիամասնատում*			x		x	
դիակիզում*			x		x	
որոշակի դիրքով դիադրում*			x		x	
մեդիատոր կենդանիների զոհաբերություն*			x		x	
մարմնի ներկում*			x		x	
պատգարակների և դիակառքերի տեղադրում*			x		x	
Գույքի տեղադրում*			*		*	
մետաղադրամ բերանում		x				x
Դամբարանի լցոնման մեջ նյութի տեղադրում*		x				x
«Կյանքի մատյանի» նմանակների տեղադրում*		x				x
Արարողություններ թաղումից հետո						x
Գերեզմանի կնքում	x					x
Դրոմոսի փակում*	x					x
Զոհաբերություն դրոմոսի մուտքի մոտ*	x					x
Ներքին կրոմլեխ*	x					
Անդրդամբանային կառույցների կառուցում*	x					x
Աշխարհների միջև կապի հաստատում և հոգու վերածնունդը:						
Վերածնունդը խորհրդանշող գույք* (կաթսա, գավաթ)		x				x
վերածնունդ խորհրդանշող տապանաքարեր և խաչքարեր*		x				x
հոգեհացի մատուցում*				x	x	

դամբարանի վրա զոհաբերություն և նվիրատվություններ*				x		x
անցքերով կարասներ և աճյունա-սափորներ*				x		x
անցքերով սարկոֆագներ*				x		x
անցքեր թաղման կառույցում*				x		x
հուշակոթողներ (մենհիր, ֆալոս, վիշապ) *				x		x
զոհասեղան*				x		x
սուգ և սգահանություն	x				x	
մաքրագործման ծեսեր	x				x	

* աստղանիշով նշված են հնագիտական դրսևորում ունեցող գործողությունները:

Гайк Аветисян, Арсен Бобохян, Артак Гнуни, Левон Мкртчян, Наталья Аветисян, ОПЫТ СИТУАЦИОННОГО АНАЛИЗА ПОГРЕБАЛЬНОГО ОБРЯДА. Категория смерти как итога жизни всегда занимала особое место в культуре. С одной стороны ужас перед смертью присущ человеку вообще. С другой стороны, на протяжении тысячелетий человечество выработало более или менее устойчивую систему представлений о смерти и потустороннем мире, что позволяло сделать более полноценным земное существование в условиях неизбежной кончины. Эта система основывается на представлении, что смерть не конец, а переход из одного состояния в другое. В статье сделана попытка анализа погребального и поминального комплекса обрядов, рассматривая их в контексте обрядов отделения и объединения. Указаные обряды отображаются как в этнологическом, так и в фольклорном, мифологическом и археологическом материале.

Ключевые слова: смерть, погребальный ритуал, потусторонний мир, ритуалы отделения и присоединения, гробница, некрополь, дорога, дромос, кромлех.

Hayk Avetisyan, Arsen Bobokhyan, Artak Gnuni, Levon Mkrtchyan, Natalya Avetisyan, THE EXPERIENCE OF SITUATIONAL ANALYSIS OF THE FUNERAL RITE. The category of death as a final result of life has always occupied a special place in human culture. On the one hand, the horror of death is inherent for man in general. On the other hand, over the course of millennia, mankind has developed a more or less stable system of ideas about death and the other-world, which made it possible to make a more complete earthly existence in the face of an inevitable death. This system is based on the idea that death is not the end, but the transition from one state to another. The current article attempts to analyze the funeral and memorial complex of rites, considering them in the context of the rites of separation and association. The indicated rites are reflected in ethnological, mythological, archaeological and in folklore material.

Key words: death, funeral rite, other-world, rituals of separation and association, tomb, necropolis, road, dromos, cromlech.